# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224 ) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**30 մարտի 2018 թվականի N 24**

**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի դրույթներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 7-րդ գլխով սահմանված կարգով՝ ***որոշում եմ.***

1. Սիրուշ Համբարձումի Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող 032-009 կադաստրային ծածկագրի 0.078 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին (վկայական N 1282775) Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքում տրամադրել 10 փողոց N 18 հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**2018 թ. մարտի 30**

**գ. Նոր Արտամետ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224 ) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**30 մարտի 2018 թվականի N 25**

***ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Սվետլանա Հարությունյանին տալ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Նոր Արտամետ համայնքի 9 փողոց թիվ 9 հասցեում գտնվող 0.08 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում (ծածկագիր՝ 0030-0044, վկայական N 18052012-07-0083) բնակելի տան շինարարության թույլտվություն:
2. Պարտավորեցնել Սվետլանա Հարությունյանին.
   1) շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ տեղեկացնել համայնքի ղեկավարին և քաղաքաշինական պետական կոմիտեին՝ համաձայն N 2-5 ձևի.
   2) մուծելու սահմանված տեղական տուրքը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**2018 թ. մարտի 30**
**գ. Նոր Արտամետ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետի համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224 ) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**30 մարտի 2018 թվականի N 26**

**ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝ ***որոշում եմ.***

1. Անհատ ձեռնարկատեր Վարազդատ Հովհաննիսյանին տալ ոգելից և ալկոհոլային խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն 2018 թվականի 2-րդ եռամսյակի՝ ապրիլի 01-ից հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածի համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի ապրիլի 01-ից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**2018 թ. մարտի 30**

**գ. Նոր Արտամետ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224 ) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**30 մարտի 2018 թվականի N 27**

### ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի, Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքի ավագանու՝ 2017 թվականի դեկտեմբերի 21-ի N 53 և N 57-Ն որոշման պահանջներով՝ ***որոշում եմ.***

1. Համայնքի բյուջեի 4726՝ հուղարկավորության նպաստներ, հոդվածից 30.0 /երեսուն հազար/ դրամ հատկացնել Սլավիկ Աշոտի Սեյրանյանին:
2. Համայնքի բյուջեի 4729՝ այլ նպաստներ բյուջեից, հոդվածից 30.0 /երեսուն հազար/ դրամ հատկացնել համայնքի բնակիչ Արմեն Էդուարդի Մալաքյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

**2018 թ. մարտի 30**

**գ. Նոր Արտամետ**